ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

23.09.2015թ.

ՈՐՈՇՈՒՄ N11

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ՋՐՀԱՆ ԿԱՅԱՆ» ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20 կետի պահանջներով համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Թույլատրել համայնքի ղեկավարին օտարելու համայնքի սեփականություն հանդիսացող Խ. Աբովյան փողոց 44/1 հասցեում գտնվող արտադրական նշանակության ջրհան կայան շինությունը՝ նրա զբաղեցրած 0,00102հա հողամասով(նպատակային և գործառնական նշանակությունը՝ ջրային, ծածկագիրը 03-097-0151-0018) մեկնարկային գինը սահմանելով 90000դրամ:

1. Խ. Սահակյան
2. Գ. Փալիկյան
3. Հ. Հակոբյան
4. Ի. Սահակյան
5. Ա. Հակոբյան
6. Յ. Մկրչյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

23.09.2015թ.

ՈՐՈՇՈՒՄ N10

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 3-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Քաղցրաշեն համայնքի 2015թ բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը

1. Վարչական բյուջեի պ/ֆ 11.01.02.51 գ.ծ դասակարգման 4891 հոդվածից 464020 դրամ հատկացնել հետևյալ գործառնական դասակարգման հաշիվներին:

ա) 200000 դրամ 01.01.01.51 գ.ծ (կառավարման մարմնի պահպանում) գ.ծ դասակարգման 4213 (կոմունալ ծառայություններ) հոդվածին՝ խմելու ջրի վարձը մարելու համար:

բ) 44020 դրամ 09.02.02.51 գ.ծ (հանրակրթական ուսուցում) գ.ծ դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) ծնողազուրկ և անապահով աշակետրների դասագրքերի ձեռք բերման համար:

գ) 220000դրամ 08.03.01.51(հեռուստառադիոհաղորդումների պատրաստում) 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածին գյուղի նկարահանման աշխատանքների և ծառայությունների վճարման համար:

2. Ֆոնդային բյուջեի պ/ֆ 88000դրամ հատկացնել 01.01.01.51 գ.ծ դասակարգման 5122(վարչական սարքավորումներ) հոդվածին ղեկավարի բազկաթոռի ձեռք բերման համար:

1. Խ. Սահակյան
2. Գ. Փալիկյան
3. Հ. Հակոբյան
4. Ի. Սահակյան
5. Ա. Հակոբյան
6. Յ. Սկրչտյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ